

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և պարենի նախարարության և Ռումինիայի գյուղատնտեսության և պարենի նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և պարենի նախարարությունը և Ռումինիայի գյուղատնտեսության և պարենի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով գյուղատնտեսության բնագավառում փոխշահավետ համագործակցությունը զարգացնելու անհրաժեշտությունից,

հաշվի առնելով ժամանակակից գյուղատնտեսական արտադրությունում գիտության և տեխնոլոգիայի աճող դերը,

ընդունելով տեխնոլոգիայի, «նոու-հաուների» և հետազոտությունների արդյունքների փոխանակման միջոցով բարեկամ ժողովուրդների միջև տեխնիկական համագործակցության կարևորությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կզարգացնեն փոխադարձ համագործակցությունը գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության հետևյալ ոլորտներում.

- բանջարեղենի, մրգերի և դաշտային մշակաբույսերի արտադրություն, բարձր բերքատու տեսակների ներդրում,
- գյուղատնտեսական արտադրանքի հետբերքահավաքային մշակում և սննդի վերամշակման արդյունաբերություն,
- բույսերի պաշտպանության ծրագրերի համատեղ իրագործում,
- բնական ռեսուրսների և միջավայրի պահպանություն,
- բնական կերհանդակների համակարգված օգտագործում,
- թռչնաբուծություն,
- սերմնաբուծություն, ներառյալ ցեղերի բարելավումը և արհեստական սերմնավորման իրականացումը,
- անասնաբուժական դեղամիջոցների և կենսապատվաստուկների մատակարարման, համատեղ արտադրության կազմակերպում,
- լեռնային տարածքների զարգացում, ներառյալ գյուղական զբոսաշրջությունը,
- գյուղատնտեսության մեքենայացում,
- ոռոգում և հողերի վերականգնում:

Հոդված 2

Կողմերը գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության բնագավառում համագործակցությունը կիրառորձեն հետևյալ եղանակով.

- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկության, նորմատիվ փաստաթղթերի, ստանդարտների և նմուշների փոխանակում,
- անասնաբուժասանիտարական, կարանտինի և բույսերի պաշտպանության բնագավառներում համագործակցության պայմանագրերի կնքում,
- գիտահետազոտական և արտադրատեխնոլոգիական ծրագրերի համատեղ մշակում և իրականացում,
- բուսաբուծության բնագավառում նոր ագրոտեխնիկական տեխնոլոգիաների ներդրում,
- բնական ռեսուրսների պահպանման (հող, ջուր, բնական կերհանդակ, բազմամյա տնկարկ) ծրագրերի մշակում և իրականացում,
- մասնակցություն գյուղատնտեսական ցուցահանդեսներին և տոնավաճառներին,
- աջակցություն համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը,
- աջակցություն գյուղատնտեսական և սննդի բնագավառի մասնագետների, ձեռներեցների և ազարակատերերի հանդիպումների կազմակերպմանը,
- ուսումնական ծրագրերի համատեղ կազմակերպում:

Հոդված 3

Համագործակցության ծրագրերի նպատակների, համագործակցության ձևերի և գործունեության, ինչպես նաև գյուղատնտեսության և սննդի բնագավառում համագործակցության վերլուծության իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն համատեղ աշխատանքային խումբ, որը նիստեր կգումարի տարին մեկ անգամ՝ հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Ռուսիանիայում:

Հոդված 4

Համատեղ գործունեության ընթացքում ձեռք բերված արդյունքները պատկանում են երկու Կողմերին: Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է չհրապարակել և երրորդ կողմի չտալ մյուս կողմից ստացված տնտեսական և տեխնիկական-գիտական տեղեկությունը, ինչպես նաև համատեղ գործունեության արդյունքները, քանի դեռ

դրա վերաբերյալ չի ստացվել մյուս Կողմի գրավոր համաձայնությունը:

Տնտեսական և տեխնիկական-գիտական արդյունքները կօգտագործվեն անկախ կերպով, եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվել:

Հոդված 5

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և/կամ լրացումներ: Լրացումները և փոփոխությունները կկատարվեն 6-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված ընթացակարգերով, որից հետո արձանագրությունների տեսքով կկցվեն Համաձայնագրին:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրը հաստատման է ներկայացվում համաձայն Կողմերի պետությունների ներպետական օրենսդրության և ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար պահանջվող ընթացակարգերի կատարման վերաբերյալ վերջին ծանուցման ստացման երեսուներորդ օրվանից:

Համաձայնագիրը ստորագրվում է հինգ տարի ժամկետով, և նրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի նաև հաջորդ հինգ տարի ժամկետներով, եթե ժամկետի լրացումից ոչ ուշ, քան վեց ամիս առաջ Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին չ'ծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտի Համաձայնագրով նախատեսված այն աշխատանքների իրականացմանը, որոնք սկսվել, բայց չեն ավարտվել գործողության դադարեցման պահին:

Կատարված է 1996 թվականի մարտի 25-ին, երկու բնօրինակով, հայերեն, ռումիներեն և անգլերեն, ընդ որում բոլոր օրինակներն էլ հավասարազոր են:

Մեկնաբանության ժամանակ տարբերության դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի հոկտեմբերի 6-ից: